Հավելված 6

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիման վրա մշակված սույն մեթոդական ցուցումները սահմանում են փոխադրողի և ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքի (այսուհետ՝ ենթակառուցվածք) սեփականատիրոջ միջև փոխգործակցության կարգը և պայմաններն ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունները մատուցելիս՝ ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումներ իրականացնելու համար, այդ թվում փոխադրողների համար ենթակառուցվածքի հասանելիության կարգը՝ ենթակառուցվածքի թողունակության սահմանափակումների բացակայության պայմաններում:

Փոխադրողների համար ենթակառուցվածքի հասանելիության հետ կապված առանձնահատկությունները, ենթակառուցվածքի թողունակության անվտանգության սահմանափակման պայմաններում, սահմանվում են ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի նկատմամբ փոխադրողների անխտրական հասանելիության կանոններով:

II. Ենթակառուցվածքի սեփականատիրոջ կողմից փոխադրողին մատուցվող ծառայությունները

2. Ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունները մատուցվում են ենթակառուցվածքի կառավարչի կողմից՝ փոխադրողի հետ կնքվող ենթակառուցվածքի օգտագործման հրապարակային պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա:

3. Պայմանագրին համապատասխան, ենթակառուցվածքի սեփականատերը փոխադրողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

ա) փոխադրողին ենթակառուցվածքի կառավարչին պատկանող ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործման իրավունքի, ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի այլ օբյեկտների տրամադրում, ներառյալ փոխադրողի գնացքի բացթողման երթուղու սահմանումը և համաձայնեցումը՝ ելնելով գնացքի մեկնման

երկաթուղային կայարանի և գնացքի նշանակման վայրի երկաթուղային կայարանի միջև ամենակարճ տարածությունից,
բ) փոխադրողին պատկանող և նրա կողմից փոխադրումների համար ներգրավված երկաթուղային շարժակազմի (այսուհետ՝ փոխադրողի երկաթուղային շարժակազմ) հասանելիության ապահովումն ենթակառուցվածքի մասը հանդիսացող ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին, ներառյալ հետևյալ աշխատանքների (գործառնությունների) կատարումը՝

փոխադրողի երկաթուղային շարժակազմի ընդունում և հանձնումը ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր (երկաթուղային գծերից), փոխադրողի մոտ տվյալ գործառնություններն ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում,

փոխադրողի երկաթուղային շարժակազմից գնացքի կազմումն ենթակառուցվածքի սեփականատիրոջը պատկանող ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին, երկաթուղային կայարանների տեխնիկական միջոցների օգտագործմամբ, փոխադրողի մոտ այդպիսի կազմումն ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում,
գ) գնացքների երթևեկության կառավարումը, ներառյալ հետևյալ աշխատանքների (գործառնությունների) կատարումը՝

այլ ենթակառուցվածքների սեփականատերերի, օտարերկրյա պետությունների երկաթուղիների և տրանսպորտի այլ տեսակների կազմակերպությունների հետ փոխադրումների իրականացման տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների համաձայնեցումը,

ենթակառուցվածքի սեփականատիրոջը պատկանող ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերով երկաթուղային շարժակազմի տեղափոխման կազմակերպումը՝ կոնկրետ փոխադրման համար նախատեսված պայմանագրի պայմաններին համապատասխան,

փոխադրման կարգավարական կառավարումը,

փոխադրողի երկաթուղային շարժակազմի տեխնիկական վիճակի վերահսկողությունը (տեխնիկական զննություն),

փոխադրողի երկաթուղային շարժակազմի սպասարկումը ընթացքի ժամանակ (վերանորոգում առանց անջատման), փոխադրողի մոտ այդպիսի վերանորոգում իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում,

փոխադրողի դիմումով փոխադրողի երկաթուղային շարժակազմի երթևեկության կամ գտնվելու վայրի մասին տեղեկատվության տրամադրումը,

ենթակառուցվածքի էլեկտրիֆիկացված տեղամասերում երկաթուղային քարշային շարժակազմի էլեկտրամատակարարումը՝ փոխադրողի կողմից փոխադրման գործընթացում էլեկտրական քարշի օգտագործման դեպքում,

փոխադրման գործընթացում երկաթուղային կայարաններում տեսակավորման և մանևրային աշխատանքների անցկացումը, փոխադրողի մոտ այդպիսի աշխատանքներ իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում:

Սույն կետի «բ» և «գ» կետերում նշված աշխատանքների (գործառնությունների) սեփական ուժերով իրականացման հնարավորության առկայությունը որոշվում է փոխադրողի կողմից:

4. Բացի սույն մեթոդական ցուցումների 3-րդ կետում նշվածներից, պայմանագրով կարող է նախատեսվել հետևյալ ծառայությունների մատուցումը՝

փոխադրողին պատկանող կամ նրա կողմից փոխադրումների համար ներգրավված դատարակ վագոնների՝ փոխադրման գործընթացի հետ կապ չունեցող փնտրման հնարավորության ընձեռումը,

փոխադրողի անունից ենթակառուցվածքի սեփականատիրոջ կողմից ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի շահագործման պայմանագրի, ինչպես նաև ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերում վագոնների մատուցման, հավաքման պայմանագրերի կնքումը:

6. Ենթակառուցվածքի կառավարիչն իրավունք չունի փոխադրողին ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցումը պայմանավորել այլ ծառայությունների պարտադիր մատուցմամբ:

7. Ենթակառուցվածքի կառավարչի կողմից մատուցվող ծառայությունների, դրանց արժեքի, ինչպես նաև գնացքների երթևեկության ժամանակացույցին համապատասխան ենթակառուցվածքի առկա տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը փոխադրողներին տրամադրվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից պարբերական հաղորդագրությունների ռեժիմով՝ ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցումների ընդունման վայրերում: Նշված տեղեկատվությունը նաև կարող է լրացուցիչ տրամադրվել էլեկտրոնային կամ փոստային կապի օգտագործմամբ, կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակով:

III. Ենթակառուցվածքի օգտագործման պայմանագիրը

8. Պայմանագրին համապատասխան, ենթակառուցվածքի կառավարիչը պարտավորվում է փոխադրողին մատուցել ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ՝ ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումներ իրականացնելու համար, իսկ փոխադրողը պարտավորվում է վճարել նշված ծառայությունների դիմաց:

Պայմանագիրը կարող է կնքվել միանգամյա փոխադրում կամ ուղևորների, բեռների, ուղեբեռի ոչ միանգամյա փոխադրումներ իրականացնելու համար:

9. Ենթակառուցվածքի կառավարիչն իրավունք չունի մերժել փոխադրողին պայմանագրի կնքման համար, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
10. Պայմանագիր կնքելու առաջարկություն ուղարկելու և քննարկելու դեպքում, ենթակառուցվածքի կառավարիչը և փոխադրողը միմյանց ներկայացնում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կհամարեն:
11. Պայմանագրի էական պայմաններ են հանդիսանում փոխադրումների ենթադրվող ծավալը և ժամկետները, մատուցվող ծառայությունների ցանկը և արժեքը, հաշվարկների կարգը և ծառայությունների դիմաց վճարման եղանակները, կողմերի պատասխանատվությունը պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, այդ թվում այդպիսի չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ երրորդ անձանց պատճառած վնասի փոխհատուցման կարգը, վագոնահոսքերի կազմակերպման դրույթները, լոկոմոտիվների և վագոնների շրջանառության կարգավորումը, երկաթուղային շարժակազմի տեխնիկական սպասարկման և շահագործման կարգի սահմանումը, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտով փոխադրման պայմանագրից բխող պարտավորություններով կողմերի պատասխանատվությունը:
12. Պայմանագրի կնքումը և կատարումը պետք է իրականացվեն պահպանելով հետևյալ պահանջները՝
ա) փոխադրման գործընթացի անընդհատության ապահովումը,
բ) փոխադրողների իրավահավասարության ապահովումը՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից,
գ) ենթակառուցվածքի օգտագործման և դրանց արժեքի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը,
դ) ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման կապակցությամբ պայմանագրի կողմերին հայտնի դարձած առևտրային կամ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պաշտպանությունը:

IV. Ենթակառուցվածքի օգտագործման կարգը

13. Ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ մատուցելիս պետք է պահպանվեն ուղևորների, երկաթուղային տրանսպորտի աշխատողների և երրորդ անձանց կյանքի և առողջության անվտանգության ապահովման, երթևեկության անվտանգության և երկաթուղային տրանսպորտի շահագործման, չվացուցակին համապատասխան ուղևորատար գնացքների երթևեկության, բեռների, ուղեբեռի նշանակման կետեր հասցնելու նորմատիվային ժամկետների, էկոլոգիական և

հրդեհային անվտանգության, աշխատանքի պահպանության, սանիտարա-համաճարակային կանոնների և նորմատիվների սահմանված պահանջները:
14. Ուղևորների, բեռների և ուղեբեռի ոչ միանգամյա փոխադրումներ իրականացնելիս, պայմանագրի հիման վրա, Փոխադրողը յուրաքանչյուր կոնկրետ փոխադրման համար, ենթակառուցվածքի կառավարչին է ներկայացնում ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցում (այսուհետ՝ հարցում):
15. Հարցումը տրվում է մինչև ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման սկզբի ենթադրվող ամսաթիվը հետևյալ ժամկետներում՝

ոչ պակաս քան 45 օրացուցային օր առաջ՝ ուղիղ երկաթուղային հաղորդակցությամբ ուղևորների, բեռների և ուղեբեռի փոխադրումների իրականացման համար,

ոչ պակաս քան 25 օրացուցային օր առաջ՝ բեռների ուղիղ և ուղիղ ու ոչ ուղիղ խառը երկաթուղային հաղորդակցությամբ բեռների փոխադրումների իրականացման համար,

ոչ պակասա քան 30 օրացուցային օր առաջ՝ ուղիղ և ոչ ուղիղ միջազգային հաղորդակցությամբ բեռների փոխադրումների իրականացման համար:

Միջազգային հաղորդակցությամբ ուղևորների, բեռների և ուղեբեռի փոխադրումներ իրականացնելու համար հարցումը տրվում է ոչ պակաս քան 400 օրացուցային օր առաջ մինչև միջազգային ուղևորային գնացքների երթևեկության ժամանակացույցը գործողության մեջ դնելու ամսաթիվը:
16. Փոխադրողի կնիքով և նրա լիազորված անձի ստորագրությամբ հաստատված հարցումը ներկայցվում է ենթակառուցվածքի կառավարչին 2 օրինակից:

Հարցման ոչ լրիվ կամ ոչ ճիշտ ձևակերպելու կամ դրա ներկայացման կարգը խախտելու դեպքում, ենթակառուցվածքի կառավարիչն իրավունք ունի չընդունել այն քննարկման, ինչի մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, գրավոր ձևով ծանուցում է փոխադրողին՝ հարցումը քննարկման ընդունելու մերժման պատճառների նշմամբ:
17. Հարցումը գրանցվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից հարցումների գրանցամատյանում այն ստանալու օրը, դրա ստացման ամսաթվի և ժամի, ինչպես նաև շնորհված գրանցման համարի նշմամբ: Հարցումների գրանցամատյանի վարման կարգը սահմանվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից:
18. Կոնկրետ ժամանակահատվածում ՀՀ տարածքով ուղևոների, բեռների և ուղեբեռի փոխադրումների իրականացման համար փոխադրողին ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման հնարավորությունը սահմանվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից՝ գնացքների երթևեկության ժամանակացույցի հիման վրա և հաշվի առնելով ենթակառուցվածքի բացթողումային ունակության տվյալները:

Ուղևորատար, փոստային-բեռնային և ուղեբեռնային գնացքների երթևեկության ժամանակացույցը մշակվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից: Ուղևորատար գնացքի երթևեկության անհատական ժամանակացույցը մշակվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից փոխադրողի դիմումի և առանձին պայմանագրի հիման վրա:

Միջազգային հաղորդակցությամբ ուղևորների, բեռների և ուղեբեռի փոխադրումներ իրականացնելու համար փոխադրողին ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման հնարավորությունը սահմանվում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից՝ ուղևորատար գնացքների երթևեկության միջազգային տարեկան չվացուցակների հիման վրա:

Հարցման քննարկումը և համաձայնեցումն իրականացվում է մինչև դրա գրանցման օրը հետևյալ ժամկետներում՝

ոչ ավել քան 30 օրացուցային օրում՝ միջազգային հաղորդակցությամբ, ուղևորների, բեռների փոխադրումներ իրականացնելու համար,

ոչ ավել քան 40 օրացուցային օրում՝ բեռների ուղիղ երկաթուղային հաղորդակցությամբ և ուղիղ և ոչ ուղիղ խառը երկաթուղային հաղորդակցությամբ փոխադրումներ իրականացնելու համար,

ոչ ավել քան 15 օրացուցային օրում՝ ուղիղ և ոչ ուղիղ միջազգային հաղորդակցությամբ բեռների փոխադրումներ իրականացնելու համար:

20. Փոխադրողի կողմից հայցվող ժամանակահատվածում ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման հնարավորության առկայության դեպքում, ենթակառուցվածքի կառավարիչը համաձայնեցնում է հարցումը համապատասխան նշումով, հաստատում է հարցումն իր կնիքով և լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ, որից հետո համաձայնեցված հարցման 1 օրինակը անհապաղ վերադարձնում է փոխադրողին:

Ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման հնարավորության բացակայության դեպքում, ենթակառուցվածքի կառավարիչը, հարցումը գրանցելու օրվանից ոչ ավել քան 10 օրացուցային օր ժամկետում, վերադարձնում է հարցման 1 օրինակը փոխադրողին՝ այն ժամանակահատվածի նշմամբ, որի ընթացքում փոխադրողի կողմից հայցվող ծառայությունները կարող են մատուցվել: Ենթակառուցվածքի կառավարչի առաջարկության հետ համաձայն լինելու դեպքում, փոխադրողը, հարցման վերադարձման օրվանից ոչ ավել քան 5 օրացուցային օր ժամկետում, ենթակառուցվածքի սեփականատիրոջն է ուղարկում նոր հարցում՝ ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման համաձայնեցված ժամկետի և պայմանների նշմամբ:

Համաձայնեցված հարցումը կցվում է պայմանագրին որպես հավելված:

Այն դեպքում, եթե ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման ժամկետի և պայմանների մասին պայմանավորվածություն ձեռք չի բերվել

կամ եթե անհնար է մատուցել այդ ծառայությունները սույն Մեթոդական ցուցումների 21-րդ կետով նախատեսված հիմքերով, ենթակառուցվածքի կառավարիչը փոխադրողին է ուղարկում ծառայությունների մատուցման անհնարինության վերաբերյալ պատճառաբանված ծանուցում:

21. Կնքված պայմանագրի առկայության պայմաններում՝ ենթակառուցվածքի կառավարիչը կարող է մերժել փոխադրողին ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման մեջ, հետևյալ դեպքերում՝

ա) փոխադրման իրականացման տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների բացակայության, այդ թվում հարցման քննարկման պահին հայցվող ժամանակահատվածում գնացքների երթևեկության կոնկրետ ուղղությամբ ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման այլ փոխադրողների հարցումների առկայության դեպքում,

բ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

22. Ուղևորների, բեռների, ուղեբեռի միանգամյա փոխադրման իրականացման պայմանագրի ստորագրումը տեղի է ունենում սույն Մեթոդական ցուցումների 15-20-րդ կետերով նախատեսված կարգով՝ հարցման համաձայնեցմամբ: Տվյալ դեպքում հարցման ուղարկումը հանդիսանում է օֆերտա, իսկ հարցման բովանդակությունը կազմող կոնկրետ փոխադրման ժամկետը և պայմանները ներառվում են պայմանագրի մեջ: Կոնկրետ փոխադրման իրականացման համար ենթակառուցվածքի օգտագործման հայցվող ծառայությունների ժամկետի և պայմանների շուրջ պայմանավորվածության չհասնելը, ինչպես նաև սույն Մեթոդական ցուցումների 21-րդ կետով նախատեսված դեպքերը, հիմք են հանդիսանում պայմանագիրը կնքելուց հրաժարվելու համար:

23. Փոխադրողն իրավունք ունի գրավոր դիմել ենթակառուցվածքի կառավարչին՝ համաձայնեցված հարցման մեջ փոփոխությունների կատարելու վերաբերյալ խնդրանքով: Ենթակառուցվածքի սեփականատերը քննարկում է այդպիսի դիմումը և հայտնում է փոխադրողին քննարկման արդյունքների վերաբերյալ՝ դիմումը ստանալու օրվանից հետևյալ ժամկետներում՝

10 օրացուցային օրվա ընթացքում՝ ուղիղ երկաթուղային հաղորդակցությամբ ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումների համար,

15 օրացուցային օրվա ընթացքում՝ ուղիղ միջազգային հաղորդակցությամբ ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումների համար:

24. Պայմանագրով նախատեսված ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններից հրաժարվելու դեպքում, փոխադրողը պարտավոր է ենթակառուցվածքի կառավարչին գրավոր ծանուցել այդ մասին (եթե կողմերի համաձայնությամբ այլ ձև նախատեսված չէ) մինչև փոխադրումները իրականացնելը ոչ պակաս, քան 10 օրացուցային օր առաջ: Ընդ որում, փոխադրողը

պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությանը և պայմանագրին համապատասխան:

Ենթակառուցվածքի կառավարիչը, ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններից հրաժարվելու վերաբերյալ փոխադրողի ծանուցումը ստանալու դեպքում, պարտավոր է անհապաղ համապատասխան փոփոխություններ կատարել տեղեկատվական հաղորդագրություններում՝ ենթակառուցվածքի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների մեծացման կապակցությամբ:

25. Յուրաքանչյուր կոնկրետ փոխադրման ավարտից հետո կատարվում է մատուցված ծառայությունների արժեքի վերահաշվարկ՝ ելնելով դրանց մատուցման փաստացի ծավալներից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

26. Ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է մինչև դրանց մատուցումը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

27. Ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների դիմաց վճարման պարտավորության կատարում է համարվում փոխադրողի կողմից ենթակառուցվածքի կառավարչի հաշվարկային հաշվին փաստացի վճարում կատարելը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

28. Պայմանագիր կնքելուց հրաժարվելը բողոքարկվում է դատական կարգով:

Պայմանագրից բխող պարտավորությունների վերաբերյալ վեճերը քննարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: